ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԸ ՆԱԽԱՁԵՌՆՈՒՄ Է ԱԴՐԲԵՋԱՆՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀԱՅ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԳՈՐԾԸՆԹԱՑ

24.06.2021 17:30

ՀՀ փաստաբանների պալատը 24.06.2021թ. կազմակերպել է խորհրդակցություն **Ադրբեջանում ընթացող դատավարություններում հայ ռազմագերիներին իրավաբանական օգնություն ցույց տալու արդյունավետության հարցի շուրջ:**

Խորհրդակցությանը մասնակցել են ՀՀ փաստաբանների պալատի նախագահ **Արա Զոհրաբյանը**, նախագահի առաջին տեղակալ **Մանե Կարապետյանը**, նախագահի տեղակալ **Հարութ Ակլունցը**, փաստաբաններ **Հայկ Ալումյանը** և **Արա Ղազարյանը**:

Խորհրդակցությանը ներկա են գտնվել Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության ներկայացուցիչ **Եղիշե Կիրակոսյանը** և ներկայացուցչի տեղակալ **Լիպարիտ Դրմեյանը**: ՄԻԵԴ-ում ՀՀ ներկայացուցիչը փաստաբաններին ընդհանուր տեղեկություններ է տրամադրել հայ ռազմագերիների վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում քննվող գործերի ընթացքի մասին:

Փաստաբանները քննարկել են Ադրբեջանում հայ ռազմագերիներին իրավաբանական օգնություն ցույց տալու, ինչպես նաև հնարավոր խախտումները բացահայտելու և հիմնավորելու անհրաժեշտության և արդյունավետության հարցը: Փաստաբանները մտահոգություն են հայտնել առ այն, որ Ադրբեջանը խոչընդոտելու է ՀՀ փաստաբանների կողմից հայ ռազմագերիներին իրավաբանական օգնության տրամադրմանը:

Քննարկման արդյունքում, Փաստաբանների պալատը որոշել է դիմել Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններին, Ադրբեջանի իրավասու մարմիններին, Ադրբեջանի փաստաբանների միությանը, ինչպես նաև միջազգային այլ կառույցներին՝ *հայ ռազմագերիներին Հայաստանի Հանրապետության փաստաբանների միջոցով իրավաբանական օգնություն ցույց տալն ապահովելու, ՀՀ փաստաբանների մուտքը Ադրբեջան թույլատրելու և նրանց անվտանգությունը երաշխավորելու հարցերով*:

Վերոգրյալը հաշվի առնելով խնդրում ենք մինչև **2021թ. հունիսի 29-ը՝**

- Ադրբեջանում հայ ռազմագերիներին իրավական օգնություն ցույց տալու պատրաստակամություն ունեցող **քրեաիրավական մասնագիտացման փաստաբաններին**՝ info@advocates.am էլեկտրոնային փոստին գրություն ուղարկելու միջոցով տեղեկացնել այդ մասին:

- **Հայ ռազմագերիների ընտանիքի անդամներին**՝ Ադրբեջանում ՀՀ փաստաբանի միջոցով ներկայացված լինելու ցանկության դեպքում դիմել ՀՀ փաստաբանների պալատ:

Հարգանքով՝

ՀՀ փաստաբանների պալատի

մամուլի խոսնակ՝ Տաթևիկ Բուջատյան

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })